

## Իրանի մայրաքաղաքը տեղափոխելու նախագծի մասին ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 18.02.2025 թ.<sup>1</sup>

Իրանի ղեկավարությունը 2025 թ. հունվարին կրկին հայտարարեց մայրաքաղաքը Թեհրանից Հնդկական օվկիանոսի ափին գտնվող Սիստան և Բելուջիստան նահանգի Մաքրան (Մեքրան) կոչվող վայր տեղափոխելու իր մտադրության մասին: Իրանի կառավարության ներկայացուցչի խոսքով՝ այդ նպատակով կստեղծվեն երկու փորձագիտական հանձնաժողովներ, որոնք հարցը կուսումնասիրեն բազմակողմ դիտարկմամբ<sup>2</sup>:

Մայրաքաղաքի տեղափոխման շուրջ քննարկումներն Իրանում ակտիվացել են 2024 թ. սեպտեմբերից՝ Իրանի նորընտիր նախագահի կողմից կառավարության ձևավորումից անմիջապես հետո: Իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Մասուդ Փեզեշքիանն ընտրողներին խոստացել էր համոզել գերագույն իշխանությանը, որպեսզի իրացնի երկրի զարգացման համար մեծ նշանակություն ունեցող այս նախագիծը:

Նոր մայրաքաղաքի գաղափարը քննարկվում էր տակավին Ռեզա Փահլավի շահի օրոք: Միացյալ Նահանգները, ում հետ շահը դաշինքի մեջ էր, նրան խորհուրդ էր տվել մայրաքաղաքը տեղափոխել հարավ, քանզի այն կարծիքին էր, որ Թեհրանը խորհրդային սահմանին շատ մոտ է գտնվում, ինչը պատերազմի դեպքում նրան բավականին խոցելի է դարձնում<sup>3</sup>: Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը հետաձգեց ծրագիրը, սակայն այն նորից օրակարգ բերվեց Հասան Ռոհանիի գլխավորած բարեփոխական ուժերի կողմից, ով հաղթել էր 2013 թ. նախագահական ընտրություններում: Այնուամենայնիվ, այն ժամանակ այաթոլլահ Ալի Խամենեին և Գերագույն հոգևոր խորհուրդը («Պահապանների խորհուրդը») մերժեցին այդ գաղափարը՝ որպես մի նախաձեռնություն, որը չի համապատասխանում երկրի ընթացիկ օրակարգին և առաջնահերթություններին: Չնայած ընտրություններում տարած հաղթանակին, 2010-ականների սկզբին բարեփոխականների դիրքերն ամուր չէին պետական համակարգում, քանզի հաշվի առնելով Մերձավոր Արևելքում իրավիճակի ընդհանուր սրումը, Իրանի պահպանողական ուժերը՝ ի դեմս ԻՀՊԿ-ի հոգևորականների և գեներալների, թերահավատորեն էին վերաբերվում երկրի արդիականացման տարբեր նախաձեռնություններին ու ծրագրերին:

Իսկ հիմա, ըստ ամենայնի, բարեփոխականների գաղափարը դրական արձագանք է գտել պահպանողական ուժերի շրջանում, որոնք, ամեն դեպքում, պատրաստ են

<sup>1</sup> Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 15.02.2025 թ.:

<sup>2</sup> «Իրանի իշխանությունները մտադիր են մայրաքաղաքը Թեհրանից տեղափոխել ծովափ».  
NEWSRU.CO.IL (ռուս.), 08.01.2025, [https://www.newsru.co.il/mideast/8jan2025/tehran\\_202.html/](https://www.newsru.co.il/mideast/8jan2025/tehran_202.html/) (բեռնման օրը՝ 10.02.2025):

<sup>3</sup> «Այլ ընտրություն չկա՞: Ի՞նչ է թաքնված Իրանի մայրաքաղաքը տեղափոխելու փորձի հետևում. TACC, (ռուս.), 16.09.2024, <https://tass.ru/opinions/21875313/> (բեռնման օրը՝ 10.02.2025):

քննարկել այդ նախաձեռնությունը: Այդ մասին են վկայում փորձագիտական հանձնաժողովների ստեղծումն ու իրանական ՋԼՄ-ներում նախագծի ծավալված քննարկումները: Նշենք, որ առանց Գերագույն առաջնորդի հավանության մայրաքաղաքը տեղափոխելու թեման դժվար թե աշխույժ ու հանրային քննարկումների առարկա դառնար Իրանում: Իսլամական Հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) նույնպես հետաքրքրություն է ցուցաբերել այդ գաղափարի նկատմամբ: Ըստ իրանական աղբյուրների, նրա բիզնես կառույցները կստանան ամենակարևոր պայմանագրերը նոր մայրաքաղաքի և դրա ենթակառուցվածքների կառուցման համար: Հայտնի է, որ *Guardian Corps*-ի հետ փոխկապակցված ընկերությունները զբաղվում են նավթի արդյունահանմամբ, բանկային գործերով և շինարարությամբ, ունեն մեծ փորձ և անհրաժեշտ տեխնիկական բազա<sup>4</sup>: Հաշվի առնելով, որ խոսքը տասնյակ միլիարդավոր դոլար արժողությամբ պայմանագրերի մասին է, կարելի է ակնկալել, որ էլիտար կորպուսի գեներալներն ակտիվորեն լոբբինգ են անելու նախագծի համար: Միևնույն ժամանակ, բացի մայրաքաղաքը տեղափոխելու իրական սոցիալ-տնտեսական պատճառներից, որոնց մասին խոսում են բարեփոխականները, ԻՀՊԿ-ն կարող է առաջնորդվել նաև ռազմական ռազմավարական բնույթի շարժառիթներով:

Ընդհանուր առմամբ, Իրանի համար եզակի իրավիճակ է ստեղծվել, որտեղ բարեփոխականների և պահպանողականների նպատակները կարող են լիովին համընկնել:

Իրանական ՋԼՄ-ներում քննարկվող պաշտոնական վարկածի համաձայն՝ մայրաքաղաքը տեղափոխելու անհրաժեշտությունը պայմանավորված է սոցիալական խնդիրներով և տնտեսական նպատակահարմարությամբ:

Նախ՝ Թեհրանը ծանրաբեռնված է: Քաղաքի ենթակառուցվածքները չեն կարողանում հարմարավետություն ապահովել 12 մլն բնակիչների համար: Դեռևս 2000-ականների տվյալներով Թեհրանում իրավիճակը բնութագրվում էր որպես ծայրահեղ: Մայրաքաղաքի զգալի մասը միացված չէր կենտրոնացված կոյուղու համակարգին, իսկ բնակչությունը մաքուր խմելու ջրի պակաս ուներ<sup>5</sup>: Քաղաքում բացակայում են կանաչ տարածքները, օդի աղտոտվածությունը բարձր է, հաճախակի են ավազահողմերը: Քաղաքը տուժում է խցանումներից, իսկ մայրաքաղաքից դուրս բերված աղբը չի վերամշակվում և կենտրոնանում է արվարձանների մեծ աղբավայրերում, որի պատճառով էլ այլևս բավարար տարածք չկա դրանց հետագա ընդլայնման համար:

---

<sup>4</sup> «Իրանի ԻՀՊԿ-ը ներգրավված է ավելի քան 1100 կմ երկարությամբ մայրուղիների կառուցման մեջ»: IRAN.ru (ռու.), 25.06.2019, [https://iran.ru/news/economics/113543/KSIR\\_Irana\\_uchastvuet\\_v\\_stroitelstve\\_bolee\\_1100\\_km\\_avtomobilnyh\\_dorog/](https://iran.ru/news/economics/113543/KSIR_Irana_uchastvuet_v_stroitelstve_bolee_1100_km_avtomobilnyh_dorog/) (բեռնման օրը՝ 10.02.2020):

<sup>5</sup> «Ներկայումս Իրանի քաղաքային բնակչության 98%-ն օգտվում է հոսող ջրից և միայն 20-25%-ն է օգտվում կոյուղուց»: IRAN.ru (ռու.), 09.09.2005, [https://iran.ru/news/politics/23609/V\\_nastoyashchee\\_vremya\\_98\\_gorod\\_skogo\\_naseleniya\\_Irana\\_polzuyutsya\\_vodoprovodom\\_i\\_tolko\\_20\\_25\\_kanalizaciy](https://iran.ru/news/politics/23609/V_nastoyashchee_vremya_98_gorod_skogo_naseleniya_Irana_polzuyutsya_vodoprovodom_i_tolko_20_25_kanalizaciy) (բեռնման օրը՝ 10.02.2025).





որոնցից ամենակարևորը, ինչպես սպասվում է, կլինի Չաբահարը (Չահրեհար): Ըստ ծրագրի՝ վերջինս պետք է դառնա Հնդկական օվկիանոսի ավազանի երկրների և Արևմտյան Ասիայի տարածաշրջանի միջև առևտրի ամենամեծ լոգիստիկ հանգույցը: Հնդկաստանը, որն արդեն հարյուր միլիոնավոր դոլարներ է ներդնում իր ենթակառուցվածքներում, առաջին հերթին ձգտում է նման կարգավիճակ և դեր ունենալ Չաբահարի համար<sup>8</sup>:

Մաքրանի առանձնահատկությունը կարող է վկայել Իրանի իշխանությունների մտադրության մասին՝ երկրի հիմնական ֆինանսական և վարչական կառույցները, արդյունաբերական հզորությունները և լոգիստիկ հանգույցները խմբավորել մեկ տարածաշրջանում: Այսինքն՝ աշխարհագրորեն միավորել պետության հիմնական տնտեսական ակտիվները, ինչպես նաև երկրի քաղաքական «ծանրության կենտրոնը» տեղափոխել հյուսիսից հարավ:

Ինչ վերաբերում է վերջինիս, ապա հատկապես պետք է նշել, որ հակառակ արդեն հիշատակված եգիպտական փորձի, Իրանի իշխանությունները չեն էլ դիտարկել Թեհրանին համեմատաբար մերձակա տարածքում նոր մայրաքաղաք հիմնելու հնարավորությունը: Եգիպտոսի նոր մայրաքաղաքը կառուցվում է Կահիրեից ընդամենը 50 կմ հեռավորության վրա, մինչդեռ իրանցիներն ընտրել են Թեհրանից հազարավոր կիլոմետր հեռու գտնվող վայր՝ երկրի հակառակ կողմում: Սա զգալիորեն կբարձրացնի ծրագրի ծախսերը և կբարդացնի կառավարական կառույցների տեղափոխման և կենտրոնական կառավարման գերատեսչությունները նոր պայմաններին հարմարեցնելու գործընթացը: Եվ այնուամենայնիվ, եթե Թեհրանի իշխանությունները հաշվի են առնում այդ ռիսկերը, բայց անհրաժեշտ են համարում հաղթահարել դրանք, ապա դա միայն վկայում է այն մասին, որ երկրի «ծանրության կենտրոնը» Հնդկական օվկիանոսի ափեր տեղափոխելու նախաձեռնությունը կենսական նշանակություն ունի Իրանի համար:

Այս համատեքստում հարկ է նշել հետևյալ հանգամանքը. իրանցի քաղաքական գործիչներն ու մեկնաբաններն այս նախաձեռնությունը քննարկելիս այն պատճառաբանում են բացառապես տնտեսական, սոցիալական և բնապահպանական փաստարկներով: Այդ դեպքում կարելի է ենթադրել, որ իրականում ռազմաքաղաքական և աշխարհառազմավարական գործոններն զգալի, եթե ոչ՝ առաջնային նշանակություն ունեն Մաքրանի ընտրության հարցում:

Մաքրանը գտնվում է Իրանի անհանգիստ Սիստան և Բելուջիստան նահանգում, որը բնակեցված է բելուջների բնիկ էթնոսով: Բացի Իրանից, այս ժողովրդի ներկայացուցիչները հոծ ապրում են նաև հարևան Պակիստանի հարավ-արևելքում և Աֆղանստանի հարավում: Ինքնիշխանության գաղափարները լայնորեն տարածված են

---

<sup>8</sup> «Իրանական էր, դարձավ հնդկական». Коммерсантъ (ռու.), 14.05.2024, <https://www.kommersant.ru/theme/1808> (բեռնման օրը՝ 12.02.2025):

բելուջների շրջանում, և զգալի թվով երիտասարդներ ներգրավված են զինյալ խմբերում, որոնք պայքարում են Իրանից և Պակիստանից տարածաշրջանի անկախության համար: Իրանի տարածքում բելուջները պարբերաբար ահաբեկչություններ են իրականացնում, որոնցից վերջինը գրանցվել է 2024 թ.: Բելուջ անջատողականների դեմ պայքարը 2024 թ. հունվարին հանգեցրեց Իրանի և Պակիստանի միջև դաժան բախման, որը գրեթե վերաճեց լայնածավալ պատերազմի: Իրանի փորձը ցույց է տալիս, որ «բելուջական ծայրահեղականության» դեմ պայքարի նախկինում փորձարկված մեթոդները չեն տալիս Թեհրանի ուզած արդյունքը, և Սիստան ու Բելուջիստան գավառը, որը երկրի մայրաքաղաքից ամենահեռու է, խնդրահարույց է պետական կառավարման առումով:

Եվ, այնուամենայնիվ, այդ գավառում ապակայունացման հիմնական պատճառը, ինչպես համոզված է Թեհրանը, ոչ թե բելուջներն են, այլ արևմտյան երկրները, որոնք կանգնած են նրանց «ծայրահեղական շարժման» հետևում: Իրանցիները կարծում են, որ ապստամբ բելուջները ֆինանսավորվում և ուղղորդվում են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետախուզական գործակալությունների կողմից, ինչը դժվարացնում է նրանց շարժման դեմ պայքարում հասնել զգալի հաջողությունների:

Այս համատեքստում մայրաքաղաքը բելուջների պատմական երկիր տեղափոխելը կարող է միանգամից մի քանի կարևոր խնդիր լուծել: Նախ՝ նկատելիորեն փոխել տարածաշրջանի ազգային կազմի հարաբերակցությունը: Երկրորդ՝ արմատապես բարելավել Իրանի ամենաաղքատ գավառի տնտեսական և սոցիալական մթնոլորտը, որի բնակիչներից շատերի համար անջատողական շարժմանը մասնակցելն իրենց ընտանիքներին կերակրելու միակ միջոցն է: Երրորդ՝ բնական պատնեշ ստեղծել Պակիստանի հետ սահմանին, որով զինյալ խմբավորումները մշտապես ներթափանցում են Իրան: Չորրորդ՝ վստահելի վերահսկողության տակ առնել Սիստան և Բելուջիստան գավառի ավամերձ գիծը, որը տանում է դեպի Պարսից ծոց՝ Իրանի գլխավոր աշխարհագրական և նավթաբեր ակտիվը: Իրանը խիստ անհանգստացած է դեպի Հնդկական օվկիանոս ելքի կորստով, ինչը երկրին կսպառնա փաստացի փլուզմամբ:

Բացի վերը թվարկվածներից, պետք է հաշվի առնել նաև այն, որ նոր մայրաքաղաքի համար ընտրված վայրը թույլ կտա պետության ծայրահեղ կարևոր օբյեկտները (ԾԿՕ) առավելագույնս հեռացնել Իսրայելից, Ադրբեջանից, Թուրքիայից և Իրանի նկատմամբ թշնամաբար տրամադրված արաբական երկրներից: Ակնհայտ է, որ ներկայիս Թեհրան մայրաքաղաքը գտնվում է անբարյացակամ երկրների զինանոցում առկա ժամանակակից օդային և հրթիռային միջոցների հասանելիության գոտում, և դա ծայր աստիճան կարևոր հանգամանք է: Թերևս դա որոշիչ դեր է խաղացել նրանում, որ ԻՀՊԿ-ն ու երկրի անվտանգության այլ մարմինները չխոչընդոտեցին մայրաքաղաքը տեղափոխելու Փեզեշքիանի վերակենդանացրած գաղափարին: Նոր մայրաքաղաքի տեղադրությունը նրան ամբողջությամբ վտանգազերծ չի դարձնի Իրանի հյուսիսից և

արևելքից ենթադրաբար սպասվող հարձակումներից, սակայն այն զգալիորեն կերկարաձգի հարվածային միջոցների թռիչքի ժամանակը, դրանով իսկ մեծացնելով ՀՕՊ և ՀՀՊ համակարգերով թիրախները խոցելու հնարավորությունները: Այս առումով՝ ծովին ապավինելը կարող է նաև ինքնավստահության լրացուցիչ աղբյուր դառնալ Իրանի համար՝ օգնելով հաղթահարելու տարածաշրջանում խոցելիության և մեկուսացման զգացողությունը: Չի կարելի անտեսել նաև այն փաստը, որ Թեհրանն անմիջականորեն մոտ է Իրանի հյուսիս-արևմուտքի թյուրքալեզու խմբերով բնակեցված գավառներին, իսկ ներկայիս մայրաքաղաքում նրանք ընդհանուր բնակչության բավականին բարձր տոկոսն են կազմում: Նկատի ունենալով իրանական հասարակության տվյալ հատվածի խոցելիությունն ազգայնական և անջատողական բնույթի արտաքին ազդեցությունների դեմ հանդիման, Իրանի իշխանությունների ընտրությունը կօգնի նաև չեզոքացնել այն գործոնները, որոնք կարող են ապակայունացնել կենտրոնական իշխանության մարմինների աշխատանքը ներքաղաքական ապակայունացման համատեքստում:

Այսպես թե այնպես, մայրաքաղաքի տեղափոխումը, եթե դա իրականացվի, արմատապես կփոխի Իրանի ներքին կառուցվածքը և, համապատասխանաբար, կճշտի նրա տարածաշրջանային ու միջազգային քաղաքականության բազմաթիվ տարրեր: Այս ծրագիրը հարկ է համարել տարածաշրջանի աշխարհաքաղաքական տեկտոնիկայում ուժեղացված տեղաշարժերի պայմաններում «ամուր հավասարակշռություն» ձեռք բերելու և ներքին քաղաքական ու տնտեսական իմունիտետի ամրապնդման միջոցներ գտնելու փորձ: Սա համարձակ և հետաքրքիր, բայց նաև միանգամայն բարդ ու վտանգավոր նախաձեռնություն է: Ուստի՝ Թեհրանը չի շտապում այն իրականացնել և ուշադիր ուսումնասիրում է բոլոր տեսակետները:

Իրանի համար որպես խորը վերլուծության հատկանշական օրինակ կարող են ծառայել ոչ այնքան Եգիպտոսը կամ Բրազիլիան, որքան որ սեփական պատմական փորձը: Իրանը հնագույն երկիր է, որը, թերևս, ավելի շատ, քան աշխարհի ցանկացած այլ երկիր, անցած պատմական ուղիում «փոխատեղել» է իր մայրաքաղաքները: Աքեմենյանների Պասարգադայի և Պերսեպոլիսի ժամանակներից մինչև ժամանակակից Թեհրան պարսկական քաղաքակրթությունն իր տարբեր ձևավորումներով ու դրսևորումներով փոխել է միանգամայն տարբեր աշխարհագրությամբ և մշակութային-քաղաքակրթական բովանդակությամբ տասնյակ քաղաքական կենտրոններ: Այդ իրողությանը մակերեսային մոտեցումը կարող է դրդել մարդուն մտածել այս քաղաքակրթության փոփոխականության և շարունակական անկայունության մասին: Սակայն այս գնահատականը կարող է արմատապես փոխվել, եթե հարցին մոտենանք այլ տեսանկյունից: Այս դեպքում «անկայունությունը» կարելի է վերաիմաստավորել որպես «ճկունություն», որը թույլ տվեց իրանական քաղաքակրթությանը գոյատևել 2600 տարի՝ շարունակելով զարգանալ ու կառուցել նոր մայրաքաղաքներ: